

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Հ. Հ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

27, Avenue Marceau PARIS.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հ. Հ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Հայաստանի վերջին դժբախտ անցքերուն հետեւանքով, զոնազան անհատներ և խմբակցութիւններ քաղաքական նոր ուղեգծի մը իրենց ձգտումին մէջ, դժբախտաբար յաճախ կը յանգին այն տեսակ եզրակացութիւններու, որոնք մեր դատի այս ճրգ-հաժամային օրերուն իբր զէնք կարող են ծառայել հայ ազգի թշնամիներուն ձեռքը: Այսպէս է որ վերստին հրապարակ հանուած են երկու Հայաստաններու և թրքահայ Ռուսահայի վատառողջ հարցերը: Հ. Հ. Պատուիրակութիւնը անհրաժեշտ կը համարէ յայտարարել, որ այդ կարգի մտածումներն ու ճիշդերը ուրիշ բանի չեն ծառայեր բայց եթէ հատուածական անդոյ խնդիրներով թուացնել մեր հերքին ճակատը և ուղղակի թշնամանք կարող են նկատուիլ այնքան թանկագին զոհերու գնով ձեռք բերուած Միացեալ և Անկախ Հայաստանի կուռ և յստակ գաղափարին:

Դարձեալ Հ. Հ. Պատուիրակութեան և հայկական դատը հերկայացնելու համար, անոր ունեցած իրաւասութեան մասին զանազան շրջաններու և հրատարակութիւններու մէջ տարակուսանքներ և կասկածներ կ'արտայայտուին, ինչ որ ոչ հուռազ աղէտաւոր է, այս ծանր օրերուն մանաւանդ, երբ Պատուիրակութիւնը պէտք ունի հայ ժողովրդեան բոլոր խաւերուն անխտիր և լիակատար վստահութեանն ու աջակցութեանը:

Փարատելու համար բոլոր թիւր մտածումները և առաջին առնելու համար ապագային նմանօրինակ անցանկալի երեւոյթներու յառաջացման, Հ. Հ. Պատուիրակութիւնը անհրաժեշտ կը համարէ յայտարարել հաւել հետեւեալը.

Ա.—Սէվրի Դաշնագրով ճանչցուած Հայկական Միացեալ Պետութեան հոգերու մէկ մասին ժամա.

հաշուար գրաւումը թշնամիին կողմէ, ոչ մէկ կերպով չկրնար ու չպէտք է խախտէ Միացեալ Հայաստանի Անկախութեան գաղափարը և Հ. Հ. Պատուիրակութիւնը, խորապէս գիտակից այն պարտականութեան որ իր վրայ դրուած է Հայաստանի օրինաւոր խորհրդարանին և անկէ բխած ազգային կառավարութեան կողմէ, պիտի շարունակէ անսասան կերպով հետապնդել Սէվրի Դաշնագրի իրագործումը:

Բ. — Հ. Հ. Պատուիրակութիւնը իր այս քաղաքական ու ազգային գործունէութեան ընթացքին ղեկավարուած է ոչ միայն այն հրահանգներով ու լիազօրութիւններով որ ստացած էր իր պաշտօնի հրաւիրուած ժամանակ Հայաստանի խորհրդարանէն ու կառավարութենէն, այլ մանաւանդ 1920 Նոյմ. 2-ի հոր ու վճռական լիազօրութիւններով, որոնք կարաի գրաւման յաջորդող օրերուն իսկ իրեն տրուած են մեր կառավարութեան կողմէ և որոնք կուգան այդ հոր վստահութեամբ անգամ մը եւս հաստատել իր իրաւական գիրքն ու հիմունքը:

Փարիզ, 10 Փետր.

Հ. Հ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԻՒՆԵԱՅ ԳԱՒԱՌԸ

ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԿԸ ՀՌԶԱԿՈՒԻ

(Սեփական հեռագիր Հ. Հ. Հանրապետութեան)

Թեհրան, 15 Փետր. 1921

Սիւնիք կազմեց խորհրդարան եւ անկախ հանրապետութիւն հռչակեց ինքզինքը:

ԱՐՈՒԹԵԱՆ

Հ. Հ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ՓԱՐԻԶԻ ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Փարիզ, 19 Յուն. 1921

Պ. Նախագահ

Հայաստանի Հանրապետության Պատուիրակության կողմէ ստացուած տեղեկութիւնները նոր լայն կը արձանային ընդհ. պայմաններուն վրայ, որոնք առաջ բերին Հայաստանի Հանրապետութեան մէջ ստեղծուած իրերու դրութիւնը:

Այս տեղեկութիւններէն կարելի է եզրակացնել որ Հայաստանի մէջ մեծամասնականութեան մուտքը բնաւ ներքին յեղափոխութեան մը արդիւնքը չէ, այլ ուղղակի արդիւնքը դուրսէն եկած և Հայ ժողովրդին բռնի ուժով պարտադրուած գործողութեան մը, թշնամիներու կողմէ. որոնք կը ձգտէին նոյն իսկ մեր անկախութիւնը ոտնաձգելու: Հայաստանի հողին վրայ կառուցուած խորհրդային վարչութիւնը ուրեմն, Ռուս մեծամասնականներու և թուրք ազգայնականներու գործակցութեան ուղղակի արդիւնքը եղած է, հեռու այս կամ այն ձեւի տակ Ազգային կամքի, կամ նոյն իսկ ժողովրդի մէկ փայլ հատուածին արտայայտիչը լինելէ:

Այդ երկուքին կողմէ միացեալ ջանք մը կատարուած է Հայաստանի դէմ՝ համընթաց գործունէութեան մը համար: Երգարեւ մինչդեռ թուրքերը կը քալէին կարծի վրայ, Մեծամասնականներն ալ Զանգեզուրի վրայ կը յարձակէին: Այս շրջանին մէջ գործող Մեծամասնականներու ուժը կը հաշուուէր 9000 հոգի, որոնց մէջ նաեւ բազմաթիւ թուրք աստուծներ: 1920 Հոկտ. 19 էն մինչեւ 6 Նոյեմբ. անոնք կատարած են 11 ընդհ. յարձակումներ, առանց հաշուի առնելու, բազմաթիւ ամենօրեայ ընդհարումները, Սիսիանի, Ղափանի, Գենվազի, Գողթանի և Օրտուպատի ձգտանքներուն վրայ:

Այսպէս, երբ մէկ կողմէն Մեծամասնականները կ'օգնէին թուրք ազգայնականներուն, միւս կողմէն կը կազմակերպէին Պագուի մէջ Խորհուրդ մը (Soviet) որ յետոյ 29 Նոյեմբ. 1920 ին, կարծիր զինուորներու աջակցութեամբ, Գիլիճանի վրայէն Հայաստան արշաւեց: Ահրապէս, ինչպէս այս զինուորական համագործակցութենէն առաջ, նայնպէս յետոյ ալ, քաղաքական ճնշում՝ բանեցուցաւ Ռուս մեծամասնականներու և թուրք ազգայնականներու կողմէն, ստիպելու համար որ Հայաստանը հրաժարի Սէվրի դաշնագրէն և իր յարաբերութիւնները խզէ Գաշնակիցներուն հետ:

Ահա՛ իրերու այս գրութեան մէջն է որ Հայաստանի կառավարութիւնը պարտաւորուեցաւ, իր պարտութենէն յետոյ, հպատակիլ Հայաստանի հողային ամբողջութեան և անկախութեան տեսակէտով աղէտաւոր պայմաններու, ազատելու համար գոնէ Հայ ժողովուրդը վերջնական բնաջնջումէ մը: Բայց միևնոյն ատեն այս ղեպերը կանխատեսելով է որ Հայաստանի օրինական կառավարութիւնը

Նոյեմբ. 2-ին պաշտօն յանձնած էր Հայաստանի Պատուիրակութեան, որպէսզի հետապնդէ Գաշնակիցներուն մօտ Սէվրի դաշնագրին Հայաստանի վերաբերեալ մասին ամբողջական գործադրութիւնը, հակառակ այն բոլոր յանձնառութեանց զորս Երեւանի Գահլիճը ապագային կարող էր ստանձնել՝ բռնի ուժով և ստիպման տակ:

Ռուսի Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը, որպէս Հայաստանի ազատ կամքի ներկայացուցիչը, կը պահանջէ ամբողջութիւնը այն իրաւունքներուն որոնք Սէվրի դաշնագրով, ինչպէս նաեւ Փորթամանութեանց Գաշնագրով ձանձցուած են Հայաստանի: Անկախ վստահ է որ Գաշնակից Մեծ Պետութիւնները պիտի կանգնին վերոյիշեալ դաշնագրերու բացարձակ գործադրութեան պետին վրայ, առանց նկատի առնելու Հայաստանի արդի իրապէս անցողական դրութիւնը, քանի որ անկախ տեղի տուած է թուրք ազգայնականներու (որոնք Օսմանեան Պետութեան ապստամբ տարր մը կը հանդիսանան) և Ռուս Պոլշէվիկներու (որոնց գոյութիւնը միջազգային տեսակէտով ոեւէ իրաւական հիմք չունի) միացեալ ուժին առջեւ, և տրուած ըլլալով այն պարագան որ ասոնցմէ ոչ մէկը և ոչ միւսը ձանձցուած չեն Գաշնակիցներէն, մինչդեռ Հայաստանը, իրաւական միութիւն մը արդէն իսկ, Գաշնակիցներու շարքին մէջ կը հաշուուի:

Պատուիրակութիւնս կը նկատէ որ ոեւէ փոփոխութիւն, Պէվրի դաշնագրի մէջ, ի վնաս Հայաստանի պիտի ըլլար Փորթ—Ասիոյ մէջ թուրք—Պոլշէվիկ համագործակցութեան յաջողութեան նուիրագործումը, անոր աւելով մէկ կողմէ տեսական և յարաձուռ հանգամանք, և միւս կողմէն յաւերժացնելով եզրական կոցութիւնը ոչ միայն Հայաստանի Հանրապետութեան, այլ նաեւ նախկին թրքական Նահանգներու բնակիչները եղող այն քանի մը հարիւր հազար Հայերուն, որոնք պատերազմի առաջին օրերուն ապաստան գտած էին Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն ներս, և որոնք ենթակայ սովի և ամենազարհուրելի թշուառութեանց, ի սիրտ աշխարհի ցրուած իրենց միւս հայրենակիցներու հետ, կը սպասեն որ Սէվրի դաշնագրը գործադրուի, որպէսզի վերջապէս, կարողանան դառնալ իրենց հայրենիքը, հոն լծուելու համար վերաշինական աշխատանքի, այն աւերակներուն վրայ, որոնք կուտակուած են, այսօր ազգայնական գիւղի տակ ձգտուած Երիտասարդ թուրքերու արիւնուշտ յիմարութեամբ:

Կը խնդրեմ, վսեմաշուք Տէ՛ր, որ հաճիք ընդունիլ բարձր յարգանքս այս նոր հաւաստիքը:

Ստոր. Լ. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Նախագահ

Հ. Հ. Պատուիրակութեան

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ
Պր. ԿԻՒՍԹԱՎ ՀԵՐՎԵՆ

La Victoire orupերի փես. Յ-ի համարին մեջ Պ. Կիւսթավ Հերվի «Restaurons la Turquie» վերնագրով յօդուածին ի պատասխան՝ Հ. Հ. Պատուիրակութիւնը Պր. Ահմարոնեանի ստորագրութեամբ հետեւեալ գրութիւնը ուղղած է իրեն.

Պարոն Խմբագրապետ,

«Վերականգնենք Թուրքիան» խորագրով Ձեր յօդուածին մէջ, զուրկ չեղաւ զոգովէք, Մուսթաֆա ֆէմալի Թուրք Ազգայնականութեան դէմ, Գաշնակիցներու ձեռնըմափութիւնը, յանուն իրականութիւններու քաղաքականութեան մը: Ինչ կը վերաբերի Հայաստանի, զուրկ չեղաւ որ «Վարչական Ինքնորոշութիւն մը», լեռնական ֆիւրտերու վարչագութիւններու գէմ՝ քանի մը երաշխաւորութիւններ՝ ինչպէս «միջազգային օստիկանութիւն մը» ապահովելով Հայաստանին, ժրհուած կ'ըլլայ մարդկայնական հարցը:

Որքան ալ մեծ եղած ըլլան Հայ ժողովրդի տառապանքները, անոր վերապահուած էր ծանօնալ չտեսնուած նոր ասնջանք մը եւս, այսինքն այն լեզուն զոր զուրկ չեղաւ գործածէք այսօր՝ ամբողջ պատերազմի տեւողութեան ընթացքին վեհանաժողովին անոր գաղտնի պաշտպանելէ վերջ, եթէ իրականութիւններու քաղաքականութիւնը այդ ձեւով ըմբռնուէր, պիտի ժողովուրդները լուսարանուած պիտի ըլլային այդպէսով այն արժէքին մասին զոր կը ներկայացնեն իրենց մեծերուն միջազգային յանձնարարութիւնները:

Գաշնակից զօրքերու շարքերուն մէջ կուուելէ և համաձայնական դասին հաւատարիմ մնալուն պատճառաւ իր մէկ քառորդը կորսնցնելէ վերջ՝ Հայ ժողովուրդը կը խորհի որ շատ սուղ գնած է Աէվրի գաշնակցութիւնը նուիրագործուած իր Անկախութիւնը: Անկա չկարծեր որ այդ գաշնակցութիւնը — գործածելու համար նուիրականացած բացատրութիւն մը — «քուրճի կտոր» մը ըլլայ: Երբեք չմոռնար այն պարագան որ հայկական ջարդերը և Պեյ-ձիգայի բռնաբարութիւնը իր փաստ ծառայեցին, խարանդու համար Թուրքիան և նշաւակելու՝ Գերմանիան, լուսարանելով այդ կերպով քաղաքակիրթ աշխարհի կարծիքը մեծ պատերազմի հետապնդած նպատակներու մասին: Ճշուած ժողովուրդներու ազատագրութիւնը անիմաստ բանաձեւ մը պիտի ըլլար Հայաստանի համար, երբ ան այնքան բեղմնաւոր իրականութիւն մը դարձաւ ժամանակակից շատ մը ազգերու համար: Մենք չենք կրնար հաւատալ այդ բանին, ինչպէս չենք կրնար հաւատալ, հակառակ ներկայ րոպէներու դառնութեան, որ Գրանսան Հայաստանի համար ըլլալ ուրիշ բան եթէ ոչ իրաւունքի յաւիտենական ախոյեանը կոյր ուժին դէմ: Եթէ այդպէս չըլլար անիկա, պիտի կրնա՞ր յաղթական դուրս գալ այս պատերազմէն:

Խնդրեմ ընդունեցէք ևն.

Ստոր. Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Նախագահ՝ Հ. Հ. Պատուիրակութեան

ՆՈԹ ՄԸ ԴԱՇՆԱԿԻՑ ՄԱՄՈՒԼԻՆ

Հ. Հ. Պատուիրակութեան Բնիկ. Քառուղարութիւնը հետեւեալ ճորդ դրկած է դաշնակից մամուլին.

Կարգ մը թերթեր հրատարակած են Պոլսէն եկող հեռագիր մը, որու համաձայն Հ. Զ. Գաշնակցութիւնը, որ Հայաստանի Հանրապետութեան հիմնուէն ի վեր կառավարութիւնը ներկայացուցած է, իբր թէ որոշած է միանալ Երեւան հաստատուած Մեծամասնական ուժեր-մինչ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը ի վիճակի է վճարականապէս հերքելու այս լուրը, որ «Թայմ»-ի Պոլսոյ թղթակիցը արդէն հեռագրով մը ճշտած էր, յայտնելով որ Գաշնակցութիւնը որոշած է կուուել իր բոլոր միջոցներով Մեծամասնական Հայաստանի դէմ:

Բացի այդ, Պատուիրակութիւնս կը յայտնէ որ Ղաւապաղի և Զանգեզուրի հայկական նահանգները, Մեծամասնական ուժերը բոլորովին վտարելէ յետոյ, իրենց անկախութիւնը հռչակած են և որովհետեւ Գարալագեալի և Արագածի ժողովուրդներն ալ զէն ի ձեռին մերժած են հնազանդիլ Մեծամասնական ուժերին՝ ուրեմն Մեծամասնական իշխանութիւնը իսկապէս Մայրաքաղաքէն և Երեւանի դաշտէն անդին չտարածուիր:

Հայաստանի մնացեալ մասը գրաւուած է Թուրք ազգայնականներու կողմէ որոնք, Պատուիրակութեանս ստացած հեռագրի մը համաձայն, վերջերս ջարդած են Կարսի մէջ 20,000 Հայեր:

Փարիզ 9, Փետր. 1921

ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԸ ՊԱՄՐԱՅԻ ՄԷՋ

(Փաղուած՝ Պ. Աեպուն Փափագեանի Միջազգային Տարաբեղոց մարմինը ուղղած մէկ տեղեկագրէն).

Հակառակ ժամանակի սղութեան կը փութամ՝ երկտողով մը մարմնոյդ հաղորդել հետեւեալ տեղեկութիւնները՝ որ քաջ գիտեմ թէ կը շահագրգռեն զձեզ:

Ամսոյս 4 ին մեր նաւը հասաւ Պատրա, ուրտեղէն նաւակով վերագարձանք Նահր-Օմար լման 10 ժամ: Զաջորդ օրը կիրակի, ամբողջ որբանցը աչքէ անցուցի. Ընդհանուր առմամբ՝ տպաւորութիւններս շատ լաւ են, թէեւ սկիզբները հիւանդութիւններ տեղի ունեցած են, բայց ներկայիս գաղթականներու առողջական վիճակը շատ լաւ է, ժողովուրդը առ հասարակ կ'ըմբռնէ կը ներդուի:

10 Սեպտեմբ. — Գաղթականութիւնը բաժնուած է տասը սեքշններու գրեթէ ամենուն ալ նոր վրան տըրւած են: Պաշտօնէութիւնը նոյնն է, միայն թէ կառավարութիւնը խնայողութեան համար նուազեցուցած է աշխատաւորներու թիւը: Ներկայիս ֆէմիի պահպանութիւնը յանձնուած է մօտ 300 Հայ վիճակագրութեան՝ ամենքն ալ անգլիական հրացաններով զինուած: Քէմիի շուրջ՝ ցամաքի կողմէն կայ 7 հատ պլօք հաուզ, իւրա-

քանջիւրին մէջ վեցական զինուոր, որոնք ամբողջ 24 ժամ չսկողութիւն կ'ընեն:

Քէմիլը ունի երկու հիւանդանոց, մէկը կանանց՝ մէկը ալրերու (մանուկներու անջատ բաժինով մը): Հիւանդանոցներու կից կան լոգարան վրաններ: Հիւանդներու ճիւղ մակեղէնները ունեն երկու օրը անգամ մը կը լուացուին և կը հականեխուին:

Քէմիլի ներկայ վարչութիւնը՝ որուն գլուխը կը գլուխուին Major Rymed և Capt. Nortent, իսկապէս նուիրուած մարդիկ են և կուզեն ամէն գնով օգտակար ըլլալ մեր խեղճ տարագիրներուն: Այս մարդիկ խիստ կը հետաքրքրուին մեր հարցով, բայց կ'ըսեն որ զրկուած են թարմ լուրերէ, խօստացայ իրենց զրկել Ararat և Armenia թերթերը: Այս պաշտօնեաներէն իւրաքանչիւրը իր քով առանձին թարգման մը ունի ժողովրդեան պետքերուն մօտէն տեղեակ ըլլալու համար:

Ժողովրդեան կարօտութեան մասին գաղափար մը տալու համար հետեւեալ հակիրճ նօթերը պիտի բաւեն ամենէն յուետեաններն իսկ դարձի բերելու:

Ժողովուրդը ընդհ. առումով աւելի առատ էլըստանայ քան Պաղուպայի մէջ: Գրեթէ թարմ միս ուտելէ զգուած են, այնքան բրինձ կ'առնեն որ աւելորդովը հաւնոցներ կը պահեն և հաւաքուածութիւնը շահու աղբիւր մը եղած է, ոմանք ձկնորսութիւնով կ'զբաղին, մի քանիներ փուռ շինած են և բրուտագործութիւն կ'ընեն, այնպէս որ քիչ ատենէն քէմիլը պիտի ողողեն սափարներով ու կուժերով:

Պաղտատը ունի 200 խանութ, իւրաքանչիւր խանութ պան ամսական տուրք կը վճարէ ստաւը ուռբի, մէն մի խանութ ունի իրարու վրայ հաշուելով 1000 ուռբի դրամ մագլուխ և խորհիլ որ այս դրամատէրներն ալ պետական նպաստ կ'ստանան: Մեր ժողովուրդը երբեք չպէտք է մոռնայ Մեծն Բրիտանիոյ ըրած բարիքները:

2ի մոռնամ ըսել որ գաղթականները արտօնուած են երեք օր պայմանաժամով Պասրա իջնել գործ ճարելու համար, այդ պայմանաժամէն վերջ քիչեր ետ կը դառնան: Ներկայիս Պասրայի օթէրները, ճաշարանները, սինէմաները և այլ կեդրոնները Հայ տղաքներով լիքն են, Մեր ժողովուրդը այնքան ստեղծող է և այնքան շինարար՝ որ կրնամ ըսել թէ 3 ամիս վերջ վրանաբաղաքը պիտի ըլլայ աղիւսէ քաղաք մը: Մեծէն միջեւ պզտիկ շինութեամբ կ'զբաղին և ասիկայ գիտէք ինչ մեծ միթարութիւն է գիտողի մը համար: Այս ժողովրդին հոգեկան ցաւը իր տպագրայի անորոշութիւնն է: Մարդիկ չգիտեն թէ ի՞նչ պիտի ըլլան վաղը և անորոշութիւնը կը ճնշէ զիրենք:

Արոշ գաղափար մը տալու համար կ'արժէ վեր առնել հետեւեալ պարագան: Անցեալ ամսուն՝ երբ հրահանգ տրուած էր ցուցակագրեն՝ Կովկաս, Պոլիս կամ Կիլիկիա գացողները, միայն 5000 արձանագրուած են Պաթումի համար, ուրեմն Հայ գիւղացին աւելի յստակատես է քան իր փօղիթիքօսները:

Արբանջներ. — Արբանջները գետեղուած են գետի հարաւային ափին վրայ, մօտ 200 եարտ դէպի ներս գեղեցիկ

զիրքի մը վրայ: Առ այժմ՝ փշաթելէ ցանցով բաժան մունք չկան, մէկ կողմին վրայ տղայոց 22 վրաններն են, իսկ միւս կողմը աղջկանց 12 վրանները: Ասկից զատ մէկ վրան տնօրէնութիւն և պահարանի յատկացուած, մէկ վրան տէրտէրի և արհեստանոցի (ղերձակ, կոշիակար), մէկ վրան աւագ ուսուցիչ Պրն. Եղիշէ Վարդանեանի և ընտանեաց, մէկ վրան Պրն. Թարգմանին, երեք վրան ուսուցիչներու և ծառայողներու, մէկ վրան գլխի վէրք ունեցողներու, մէկ վրան ռէլիի պահեստին, ընդամենը 43 վրան բոլորովին նոր: Ասկէ զատ կայ շատ գեղեցիկ և հանգստաւէտ փուռ մը, խոհանոց մը և յատուկ պէտքարաններ:

Ներկայ որբերու թիւը կը հասնի 820ի, որոց 524ը մանչ իսկ 296 ը աղջիկ: Ամենքն ալ ուրախ և կայտառ են:

Ո՛րքան գոհ և հպարտ պիտի գգայիք դուք ձեզ՝ եթէ իմ հետ ներկայ ըլլայիք ու տեսնէիք մեր որբերը՝ ամենքն ալ տաքուկ ու մաքուր հագուած: Ճիշդը ըսելով ես ինքս որ որբանոցներու մէջ ապրած ու պաշտօնավարած եմ, այժման կանոնաւոր, այսքան ջերմիկ որբանոց տեսած չեմ:

Աշակերտութիւն ու պաշտօնէութիւն այնքան իրար հասկցած ու իրար սիրած են որ Տարագրելոցը կրնայ վստահօրէն շարունակել իր շինարար գործը՝ առանց ազդուելու աջ ու ձախ եղած փոփոխութիւնէն, որոնք միմիայն չարամտութեան արդիւնք են:

Major Rymed հմայուած է որբանոցներով, անոր շնորհիւ չափահաս որբերէն 120 հատ շաբաթը երեք անգամ անգլիական հրացաններով մարզանք կը կատարեն, կ'արժէ տեսնել այդ անմօրուս զինւորները՝ որոնք շատ քիչ ժամանակուայ մէջ իւրացուցած են ամէն տեսակ մարզանք և իրենց կեցուածքով կըսեն մեր զահիճներուն թէ "այս ժողովուրդը մեռնիլ չգիտեր":

Գալով կրթականին՝ ուսուցիչները հմայուած են որբերու ցոյց տուած ուշիմութենէն: Նախորդ շրջանին վրայ աւելցած է երկու դասարան, տղայոց նախապատրաստական բարձրագոյն 5 դ. մը և աղջկանց նախապատրաստական բարձրագոյն 4 դ. մը:

Դասաւանդուած նիւթերու վրայ աւելցուած է իրագիտութիւն ամէն դասարաններու մէջ: Ձեռագործը կը շարունակուի տիկին Փափագեանի կողմէն: Տեսնելով որ չափահաս տղաքներ Անգլերէնի փափաք ունին, զիմեցի Major Rymed ի և ինչորեցի շաբաթը երեք պահ փութի դասեր տայ, մարդը շատ սիրով ընդունեց իմ առաջարկը. գալով քերականութեան՝ թարգման Պրն. Հ. Անդրէասեան պիտի դասաւանդէ իր կարողութեան չափով:

Արբերու սնունդի մասին շատ գոհացուցիչ տեղեկութիւններ քաղեցի պահեստապետ Պրն. Յովհ. Գրիգորեանէ, որուն տեղեկութեանց նայելով Ռէլիքը 50 0/0 տարբերութիւն ըրած է, կ'արժէ հոս մանրամասնութեանց մտնել:

Ալիւր, օրական 9—10 պարկ (պարկը 80 փառնա)
 Բրինձ, " 3—4 " " " "
 Շաքար, ամիսը 11 " " " "
 Թէյ, " 2 սնտուկ
 Բանջարեղէն, շրթ. 18 պարկ
 Արդար իւղ շրթ. 9 թիթեղ
 Կաթ շաբաթը 32 սնտուկ (երբ տրուելու ըլլայ)
 Օճառ " 1—2 " " " "
 Քարիւղ " չին տար
 Աղ, " 2 պարկ
 Չոր պտուղ օրական 1—2 սնտուկ (արմաւ, չամիչ)
 Սիսեռ և սոխ, " երբեմն, երբեմն
 Փայտ, օրական մէկ սայլ

Աշխար, օրինաւոր տրուած ատեն շաբաթը 24-28 հատ
 Փռուր շնորհիւ տնօրէնութիւն ձեռք առած միջոցնե-
 րուն շահաւէտ գործ մը եղած է Տարագրելոցի Պագու-
 պայի մօտ 200 Ռուբլի պիւտձէն, հիմայ միայն 70 Ռուբլի
 է, նախ հինգ հօգի կ'աշխատցնէ եղեր 85 Ռուբլի ամսա-
 կանով, բայց հիմայ միայն չորս հօգի կ'աշխատին 70
 Ռուբլի ամսականով:

Ներկայիս գրեթէ աչքացաւ գոյութիւն չունի, իսկ
 գլուխներու վերքերը անհետանալու վրայ են: Այս մասին
 ներքին բժիշկի օգնական Պրն. Դանիէլի աշխատանքը
 գնահատանքի արժանի է:

Դրամական խնդրոյն մէջ մոռցայ յիշել որ որբա-
 նոցի չորս գիշերապահները միշտ կ'աւնէին 10 Ռուբլի-
 հագուստ, ձերմակեղէն և կօշիկ կառավարութիւնէն ալ
 կ'ստանային 15ական, արդ, կառավարութիւնը ասոնց ալ
 ամսականները կտրած է, որով 60 Ռուբլի նոր պիւտձէ
 մը աւելցած է Տարագրելոցի սնտուկին վրայ: Դիմում
 կատարուած է Col. Overի որ շարունակուի այս 4 պա-
 հպաններու թօշակը, բայց դեռ պատասխան մը առնը-
 ւած չէ, որով տնօրէնութիւնը գործը չխանգարելու հա-
 մար ստիպուած է իրեն յատկացուած պիւտձէէն վճա-
 րել վերոյիշեալ գումարը:

Բոլորովին սխալ է այն տեղեկութիւնը թէ որբերը
 « բոկոտն » են, մեր զրկած կօշիկներէն մօտ 400 գոյգ
 հագուեցուցած են, իսկ մնացեալները կարելի չէ Պաս-
 րայի հրապարակին վրայ ծախել՝ իրենց չափին և տեսա-
 կին համար, եթէ ուզէինք անպատճառ փոխել աւելի
 մեծ չափով կօշիկներու հետ՝ 50 առ հարիւր վնաս մը
 պիտի կրէինք:

Արդ, խորհելով որ յառաջիկայիս կրկին պէտք պիտի
 ունենանք կօշիկի, պատուիրեցի պահել մնացեալները և
 միայն մարզանք կատարող 120 տղայոց համար նորը
 կարել տալ, սպասելով պրն. Մարտիրոս Գուրումձեանի
 վերագարծին՝ որ գուցէ միասին կօշիկ կը բերէ:

Հարկ կը համարեմ յիշել միանգամայն թէ՛ մենք
 անցեալ տարի թայլատրած էինք պրն. Ս. Շիրվանեանը,
 որ երեք օգնական բժիշկ պահէ մեր խոշոր տղաքներէն
 տանական Ռուբլի ամսականով: Այս տարի միեւնոյն
 տղաքները փափաքած են շարունակել իրենց ուսումը,
 ասոր համար տիկին Փերուզ Փափազեան երկու աղջիկ
 օգնականութի վարձած է հինգական Ռուբլի ամսականով:

պայմանաւ որ նոր տարիին տասը պիտի վճարէ, ինչ որ
 խիստ բանաւոր գտայ:

Վերջացնելու համար ըսեմ, որ ես չափազանց գոհ
 մնացի իմ այս այցելութենէն և պիտի փափաքէի որ
 դուք եւս առիթ մը ունենայիք տեսնելու այս կեանքով
 ու եւանդով լի վանդակը, ուր ամէն բան յոյս և հաւատ
 կը ներշնչէ ապագային համար: Իմ կողմէն միակ թելա-
 ղըրութիւնը որ կրնամ ընել, այն է որ զիմէք պաշտօնա-
 պէս Եփիպտոսի Միաց. Որբախնամին որ ամառ չեկած
 Փօսթ Սայիտ փոխադրելու աշխատի մեր որբերը, առանց
 ատոր սև ու մութ հեռանկար մը կայ ու կը մնայ իմ
 մտքի առջեւ:

ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Քաղուած մասնաւոր աղբիւրէ)

(Շարունակութիւն և վերջ)

Անգորայի կառավարութեան զինադարի պայմանները
 հետեւեալներն են.

1 — Մեզ 24 ժամայ ընթացքում Ալեքսանդրապոլի մէջ
 պէտք է յանձնին կատարելապէս գործածելի վիճակում, 2000
 արողահարած հրացան, քսան ծանր և 40 թեթեւ զնդացի,
 իրենց սարքով և կենդանիներով միասին: Երեք մարտկոց թըն-
 դանով, 4 հազար արկղ հրացանային ռազմամթերք, 6000
 թնդանովային ռումբ, երկու շոգեմեքենայ, յիսուն վագոն: Հայ-
 կական կանոնաւոր և անկանոն զինւած ոյժերը պէտք է քաշ-
 լեն Արիւմշայի հոտներով Արաբեաղ կայարան-Կիրմիլի-Քօլի-
 ջան-Նալբանդ կայարան - Վարանցովկայ գծից արեւելք: Այդ
 գծից արեւմուտք գտնուող երկաթուղին պիտի պահէ անվթար
 ու անվնաս:

2 — Բացի այդ առ առաւելն երեք օրուայ ընթացքում
 հայկական կանոնաւոր և անկանոն զինւած ոյժերը պէտք է
 քաշլին Սուրմալու-Արաքս կայարան-Կիրմիլ-Ձիյարէթ-Ալագեաղ
 լերան լանջերը-Տանազիրմազ-Նովոմիլսայէլովկայ-Նուրիքխանդ-
 Շերմուտ Եաւանդուղ գծից արեւելք:

3 — Ձինադարի կնքումից անմիջապէս յետոյ, Սանա-
 ճին Կայարանի և Ալեքսանդրապոլի միջեւ երկաթուղագծի վրայ
 պէտք է զարարի ամէն տեսակ ռազմամթերքի փոխադ-
 րութիւն: Այդ փոխադրութիւնը ստուգելու համար մեր
 կողմից Սանաճին կայարան ու Զարազիրտու ուղարկելու են
 մի մի յանձնախումբ և հայկ. կառավարութիւնը պէտք է ապա-
 հովէ յիշեալ յանձնախումբերի անձի անձեռնմխելութիւնը ու
 Ալեքսանդրապոլի վրայով արեւելեան ճակատի հրամանատա-
 րութեան նրանց կանոնաւոր կապակցութիւնը:

4 — Մինչեւ զինադարի երրորդ օրը երեկոյեան, երկու
 կողմի պատուիրակութիւնները հաշուութեան բանակցութիւնները

սկսելու համար պէտք է գտնւին Ալէքսանդրապօլում՝ և եթէ մինչեւ այդ առաջին և երկրորդ պայմանները բովանդակուած թիւեր իրագործուած լինէ, խոսքն սկսելու են հաշտութեան բանակցութիւնները:

5. — Զինադադարի տեւողութեան ընթացքում մեր զօրամասերը Ալէքսանդրապօլի շրջանում, առաջին պայմանում յիշուած Արփաշայի հոսանք-նալքանդ կայարան և Վարան-ցովկա գծից դէպի արեւելք, ինչպէս և միւս շրջաններում, իրենց կանգնած գծից աւելի առաջ չպիտի անցնին:

6. — Զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ, երկու կողմերի թշնամական գործողութիւնները վերջ են գտնելու:

7. — Զինադադարի այս պայմանները գործադրութեան են դրւում՝ Ալէքսանդրապօլի շրջանում գտնուող հայկ. առաջապահ զօրամասերին հաղորդելու ժամից սկսած: Զինադադարի տեւողութիւնն է երեք օր. վերջում կարիք զգացելու դէպքում, երկարացելու պայմանով:

Այս պայմանները քննութեան դրեցին և կառավարութեան կողմից միաձայն մերժեցին, արտհետեւ դժար էր գտնուել իրագործել: Ընդհարումները դրանից յետոյ շարունակեցին 3-4 օր, երբ և հրամանատարութեան կազմի, ինչպէս նաև զօրամասերի մէջ որոշ փոփոխութիւններ մտցեցին, բայց անյաջող:

Եզրակացութիւնը պարզ էր. որոշեց յայտնել Տաճիկներին, զինադադարի պայմանները ընդունելու մասին: Մի շարք տեքնիքական և քաղաքական դժարութիւններ հարթելու նպատակով, կառավարութիւնը ուղարկեց Ս. Արարատեանին Ալէքսանդրապօլ, անձամբ խօսելու տաճիկ հրամանատարութեան հետ և պարզելու դրութիւնը:

Ս. Արարատեանի և Գարաբէքի փաշայի տեսակցութիւնը տեղի է ունենում Ալէքսանդրապօլում նոյ. 18-ին և տեւում է 7 ժամ: Այս տեսակցութիւնից պարզւում է, 1. որ Տաճիկները չեն կարող մեղմացնել զինադադարի պայմանները, որովհետեւ չեն վստահում Հայերին, որոնք անուղղելի անվիրաւորներ են. 2. Հայերը յանցաւոր են ստորագրած լինելով Սէվրի Դաշնադրը և չուզած լինելով բանակելի Անգլոսի հետ: 3. Չեն ցանկանում հաշտութեան բանակցութիւններին ներկայ լինի Ռուսաստանի ներկայացուցիչը: 4. Չեն ցանկանում, որ Հայաստանը լինի սովետական իշխանութիւն: 5. — Խիստ անհրաժեշտ են համարում անկախ Հայաստանի գոյութիւնը միայն ցեղադրական սահմաններում և 6. — Հայաստանը արգելք չպիտի հանդիսանայ ռուս-տաճիկական աղտոտ հաղորդակցութեան:

Անգլոսի կառավարութեան ծանր որոյնանքները ընդունեցին և ամիս 25-ին նշանակեց հաշտութեան համաժողովի առաջին նիստը Ալէքսանդրապօլում, որին մասնակցելու համար Հայաստանի կողմից նշանակեցին Ալ. Խալիտեան, Աբր. Գլախտատեան և Կարսի նահանգապետ Ս. Ղորղանեան, նաև մօտ աւթ տասը հազի զինուորականներ, իրաւաբաններ ու այլ քաղաքական գործիչներ՝ իբր խորհրդականներ:

Պատուիրակութեանը հրահանգ տրեց համաձայնութեան գալ տաճիկների հետ, անկեղծօրէն գնել բոլոր հարցերը և պնդել Վան-Մուշ-Քիլիզ գծին վրայ, որը միայն կարող է բաւարարել Հայութեան, հակառակ դէպքում՝ ստորագրել

նուազագոյնը, այն է Արփաշայ-Արաքս գետերով բայց դա համարել կապուած/չապա:

Երկրում տեղեկուած այդ ծանր դրութիւնը, որ այնքան ճնշող տարադրութիւն էր թուել ազգաբնակչութեան վրայ, ստիպում էր որոնել և գտնել զրաւ մի ոյժ, տաճիկներին երկրից դուրս վաճառելու համար. նամանաւոր որ զապահ ոչինչ չարեցին: Այս դրութիւնը օգտագործւում է Լըզրանի միտման: Երկրի ներսում, պէտք էր խտատվանել, բոլշեւիկները բացարձակապէս ոյժ չունէին — միայն ժողովրդի արամադրութիւնն էր նրանց համար նպաստաւոր: Այս և այլ նկատումներով Օհանջանեանի նախարարութիւնը տեղի ունաւ որպէս զի նորը կազմէ, ստեղծուած պայմաններին համապատասխան կերպով:

Նոյ. 15-20 ժողովրդական կարծիքը փոխել էր դէպի այն կողմը, որ կազմէ այնպիսի կառավարութիւն, որ հաւասար ներշնչէ տաճիկներին, կարողանալ հաշտութիւն կնքել նրանց հետ և հնարաւորութիւն տեղեկ շինարարական աշխատանքի ներկելու: Ազգաբնակչութիւնը, ինչպէս և դեկտար որոշ շրջաններ՝ հաւատում էին, որ ժամանակաւոր է տաճիկների ներս խռովումը առաջացած կացութիւնը, որ պէտք է լսաւ կարեւոր խողալ միջոցներով մի modus vivendi տեղեկ թիրքերի հետ և սպասել հայկական հարցի լուծմանը, միջազգային, դիտանալիական ճամբով: Հասարակական կարծիքի այդ արամադրութիւնը համապատասխանելու էր կօպլեցիօն մի կառավարութեան, որ պէտք է կազմէր Յովհ. Քաջաղունին պերտնալ հիմունքներով:

Մինչ Քաջաղունին դառնալ էր իր դահլիճը կազմելու աշխատանքով, յայտնի են յաւնում տաճիկների առաջարկած վերոյիշեալ նոր պայմանները, որոնց արմատապէս վտնում են ժողովրդային դրութիւնը: Այլ ևս ոչ մի հաւասար չկար տաճիկների վրայ որ նրանց հայ ժողովրդին կը ստան ապրելու և զարգանալու պայմաններ: Այնքան էր, որ այդպիսի պայմաններով ոչ մի համաձայնութեան գալ չէր կարելի թիրքերի հետ:

Եւ տեղի ունեցաւ մտքերի անխուսափելի յեղաշրջում: Հասարակութեան ուղադրութիւնը թեքեց դէպի այդ ոյժը, որ մնացել էր և որի հետ թերեւ կարելի լինէր համաձայնութեան գալ, որ և է հասկացադրութեան լեզու ցտնել՝ տաճիկներին երկրի սահմաններից վաճառելու և հայ ժողովրդի քաղաքական դերիշխանութիւնը պահպանելու համար:

Հարկաւոր էր, նկատի ունենալով այդ դրութիւնը, կազմել մի աւելի ճախ կառավարութիւն, որպիսի գործ որոշ նկատումներով յանձնեց Ս. Վրացեանին, որը նոյ. 25-ին պերտնալ հիմունքներով կազմեց իր դահլիճը, որին նայալէս պերտնալ կերպով մասնակցում էին երկու սոց. յեղափոխականներ՝ Ս. Խոնդկարեան և Վ. Մխախտեան: Նախարարութեան կազմի էր Ս. Վրացեան՝ վարչապետ և Արա. զորքերի նախարար, զօր. Դրօ՝ զինուորական նախարար, Ս. Տէրտէրեան՝ Ֆինանսների, Ա. Յովհաննիսեան՝ երկրագործական և աշխատանքի, Ս. Խոնդկարեան՝ արդարութեան և Վ. Մխախտեան ժողովրդական լուստարութեան:

Այս կառավարութիւնը համաւորուած ուղեւորանկով ցան-

կոթիւններով երկրի կայութեան հանդէպ, իր գեղարարական միջոցով՝ դժուար էր իր գործունէութեան էական կէտերը:

Հայաստանի կառավարութեան յայտարարութիւնը

Պարլամենտի նիստին, վարչապետ Վրացեանի կողմից կարդացած կառավարական յայտարարութեան մէջ, ամենից առաջ մատնանշում է երկրի ծանր դրութիւնը, որը բարդացաւ արտաքին դժարութիւնների պատճառով: Նոր կառավարութեան զլխավոր խնդիրներն են, դուրս բերել երկիրը քաղաքական այս դժբախտութիւնների ջրապոստից և փրկել նրան օտար յարձակումներից:

« Կառավարութիւնը իր գործունէութեան մէջ պիտի դեկավարի ոչ թէ օտարերկրեայ ազդեցութեամբ, այլ պիտի յենւի Հայաստանի դեմոկրատիայի ունեւոր յոյժերի և հաւելան ժողովուրդների հետ համերաշխութեան սկզբունքի վրայ: Մեր լոզունդն է անկեղծ հաշտութիւն ծաճկատանի հետ և համերաշխութիւն բոլոր երկրների հետ: Միաժամանակ գիտակցելով որ դժբախտաբար ժամանակակից պայմաններում ոչմը դերազանցում է արդարութեան, կառավարութիւնը ստիպւած է հաշի առնել կազմակերպւած բանակ ունենալու անհրաժեշտութիւնը: Այդ պատճառով կառավարութեան զլխավոր հոգսերից մէկը պիտի լինի ուժեղ ժողովրդական բանակի կազմակերպումը: Այդ նպատակով մենք պէտք է կազմութենք բանակը յոգնած ստորերից՝ զօրացնելք մեծ հասակ ունեցողներին, որով երկրի անտեսական զարգացման աշխատողները աւելի կ'ուժեղանան:

« Ներքին կեանքի բնագաւառում, հետեւելով « ամբողջ իշխանութիւնը ժողովրդին » սկզբունքներին՝ կառավարութիւնը ամէն կերպ պիտի պայքարի բոլոր այն երեւոյթների դէմ, որոնք փորում են պետութեան հիմքերը: Կառավարութիւնը անխախտ կերպով պէտք է իրականութիւն դարձնէ երկրում բնակւող բոլոր ազգաբնակչութիւնների հաւասար իրաւունքներով օժտուելու զապահարը: Հայաստանը պատկանում է իր մէջ բնակւող բոլոր ազգութիւններին:

« Ազգայնաբարոյական և դատարանը նոյնպէս պէտք է կազմութիւն. պիտի բարձրեն հաղորդակցութեան միջոցները. ֆինանսական ձգնաժամի դէմ մղել անողոր պայքար: Պետական ծախսերը կրճատւած են, խրախուսւում են երկրի ստեղծագործական ոյժերը, ուժեղացւում են տեղական ինքնավարութիւնների գործունէութիւնը՝ պիտի փոփոխւին ամէն տեսակի արտակարգ դրութիւնները և վարչական ժամանակաւոր ձեւերը: Պաշտօնակատար անձանց յանցանքները պիտի պատժուին անխնայ օրէնքով:

« Կառավարութեան ամենագլխաւոր աշխատանքներից մէկը պիտի լինի թեթեւացնել պատերազմի սարսափելի հետեւանք եղող նոր գաղթականական հոսանքի ծանր պայմանները: Կոխ պարենաւորման սուր ձգնաժամի դէմ, յենւելով Հայաստանի դեմոկրատիայի կամքի և պարլամենտի վստահութեան վրայ: Կառավարութիւնը պիտի լարի իր բոլոր ոյժերը, երկրի համար խաղաղութիւն բերելու և ստեղծագործական աշխատանքի հնարաւորութիւններ ստեղծելու, որպէս զի նա հասնի իր ստեղծագործական ոյժերի լիակատար ծաղկման: »

Համաձայն իր յայտարարութեան, Հայաստանի դահլիճը իր առաջին խնդիրն էր համարում, տաճիկների հետ հաշտութեան պայմանագրի ստորագրումը: Ուստի նա հրահանգեց

Ալէքսանդրապոլի հայկ. հաշտարար պատւիրակութեան, որ ստորագրէ պայմանագիրը:

Քաղաքական ընդհ. կայութիւնը թելադրում էր նաև բանակցիլ ունեւոր հետ, թէ նրանք ինչպէս կարող են օժանդակել Թիւրքերի յետապայ տոնձգութիւնների առջև առնելու և նրանց դռնէ մինչև 1914-ի սահմանները յետ մղելու համար:

Ռուսական միսիան Երեւանում՝ յանձին Լըզրանի ընդառաջ գնաց հայկ. կառավարութեան առաջարկին, որի համար նա կրկնեց Հ. Օհանջանեանին արած հետեւեալ պայմանները.

1 — Համաձայն հայկ. կառավարութեան արած զմունքին, Խորհրդային Ռուսաստանը իբր միջնորդ իր ներկայացուցիչին է ուղարկում, Ալէքսանդրապոլի հաշտութեան համաժողովին մասնակցելու համար:

2 — Որպէս զի ռուսական զմունքը ծաճկատանին լինի գործօն ու ազդու՝ անհրաժեշտ է, որ ռուսական զօրք մտցւի Հայաստանի երկրամասը:

Ռուսական միսիան առանց պնդելու իր այդ պայմանները վրայ, պատրաստակամութիւն է յայտնում ի հարկին դրաւ նախապատճառ աջակցութիւն ցոյց տալ Հայաստանին, Թիւրքերի հետ պայմանագրի ստորագրման, ինչպէս և այլ հարցերում:

Հայկ. կառավարութիւնը քննութեան առնելով Լըզրանի առաջարկները, որոշեց բաւականաւոր հաշտութեան բանակցութիւնների և ռուսական միջամտութեամբ և թոյլ չտալ ռուսական զօրքի մուտքը Հայաստան:

Այս համաձայնութեան հիման վրայ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բուզու Միդիւանին մեկնեց Ալէքսանդրապոլ համաժողովի մասնակցելու: Հաշտարար պատուիրակութիւններու երկրորդ պաշտօնական նիստում, տաճիկական պատուիրակութիւնը Անդորայի կառավարութեան հրահանգով, մերժեց Միդիւանի մասնակցութիւնը, որպիսի պահանջի առաջ հայ պատուիրակութիւնը ստիպւած էր տեղի տալ:

Լըզրանը, ծաճիկների այդ ընթացքը Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչին հանդէպ, բացառեց հայկ. կառավարութեան նրանով, որ ծաճկատանը չի լուծւում Ռուսերին, որոնց հմայքն ընկել է տաճիկների աչքում և պէտք է վերականգնել այդ հմայքը:

Նոյ. 28-ին, ըստ երեւոյթին Լըզրանի կարգադրութեամբ, ռուսական զօրք է մտնում Իջեւան (Քարահանսարայ), ուր արդէն ճորոշ արամադրութիւն կար հայ-ռուսական մերձեցման. աստի և ոչ մի զինավորութիւն չի լինում հայկ. սահմանները մտնող ռուսական զօրքին՝ մինչև վերջինիս Դիլիջան մտնելը:

Այդ տեղեկութիւնը ստացւելուն պէս, Վրացեանի կառավարութիւնը իսկաւ բոլոր է յայտնում Լըզրանին: Վերջինս անմիջապէս գրաւոր ներողութիւն է խնդրում կատարւած փաստի համար և ռադիկալով հրահանգում է Բազու, որ մտած զօրքը յետ քաշել դէպի իր հաւաքին դիրքը: Որոշում է միաժամանակ, որ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը զօրավար Բօբրիլչէւն ու մեր զինւորական ներկայացուցիչը միասին Իջեւան գնան և լիկվիդացիայի ենթարկեն այդ միջադէպը:

Հայկ. կառավարութիւնը միաժամանակ հրաման է տալիս Իջեւանի շրջանում և Դիլիջանում գտնուող հայկ. զօրամասին, յառաջանալ դէպի Իջեւան և եթէ զիւստադիտական խաղաղ

ճամբաները չբաժանեցին ռուսական զորքին ստիպելու համար պարպել հայկ. երկրամասը, ղեկավարել զենքի ուժի:

Պէտք է ենթադրել որ թէպէտ Լըգրանը խոստանում էր հեռացնել Հայաստանի սահմաններից ռուսական զորքերին, բայց գաղտնի հրահանգել էր առաջ շարժել: Այս հրահանգին ենթադրությունը հիմնված է հետևեալ փաստի վրայ: Ալեքսանդրով Միդիանին պատկերապես յայտնեց, որ թէպէտ ռուսական զորքերին հրահանգւում է թողնել Հայաստանը, բայց նրանք չեն թողնի և ներս կը խուժեն:

Տեսնելով որ ռուսները չեն հեռանում հայկ. հողամասից, հայ զորքը յառաջ է շարժւում: Ընդհարման միջոցին պարզւում է որ հայկ. մի քանի հարիւր զինուորիկներ չանդաժեալ կանգնած է ռուսական վեց հազար զորք, համապատասխան հրետանիով ու մեծաքանակ գնդացիներով. այնպէս որ հայկ. ուժերին մնում էր միայն անձնատուր լինել: Զերբակալւում է նաև հայկ. գնդապետ Մանիէֆ իր օգնականով միասին, որը մի քանի ժամից յետոյ կարողանում է փախուստ տալ գերութիւնից և տեղեկացնում է իրողութիւնը:

Երեւանի ռուսական միսիան ապահովաբար տեղեակ էր այդ բոլորին: Լըգրանը դեկտ. 1-ին ներկայացնում է վարչապետ Վրացեանին ու յայտարարում, որ նա այժմ ոչ մի միջոցի չի կարող ղեկավարել ռուսական զորքը հայկ. հողամասից դուրս հանել տալու համար, քանի որ Մոսկուայից հրահանգ է ստացել ինկոնց սկսել Հայաստանի խորհրդացումը (sovietisation): Կառավարութեան պահանջի վրայ Լըգրանը պարտաւարարութիւն է տալիս իր առաջնորդի մասին և առաջարկում է հայկ. կառավարութեան յայտնել, թէ վերջինս ինչ դիրք կը բռնի խորհրդային հարցի վերաբերմամբ:

Այս ինդիքը դառնում է լայն շրջանների մտահոգութեան առարկայ, Կառավարութիւնը Պարլամենտը, կուսակցութիւնները, ամենքն էլ եկան միեւնոյն եզրակացութեան, որ հնարաւորութիւն չկայ զենքի ուժով ղեկավարելու ռուսական զորքի յառաջխաղացման նկատի ունենալով զորքի և ազգաբնակչութեան ընդհ. տրամադրութիւնը, և ան պարագան որ եթէ նոյն լակ մի աննշան բանակ էլ հնարաւոր լինի համախմբել Ռուսերին վերադարձնելու համար, այդ փորձն էլ անյաջող կը վերջանայ և ժողովրդի համար ծանր հետեւանքներ կ'ունենայ: Կառավարական և հասարակական-քաղաքական շրջաններում, խոշոր մեծամասնութիւնը այն կարծիքին էր, որ պատերազմը Ռուսաստանի հետ աւելի եւս կը ծանրացնէր Հայ ժողովրդի վիճակը: Կար մի չնչին փոքրամասնութիւն կազմող հոսանք, որ նոյնպէս ձգտում էր անխուսափելի էր համարում Հայաստանի խորհրդացումը, սակայն ուզում էր կռուով յանձնել երկիրը որպէսզի ապացուցի որ սովետիզացիան բռնադրոսիկ հարց է, որին կառավարութիւնը տեղի է տալիս զենքի ուժի առաջ:

Գերակշռեց առաջին տեսակէտը, չղմիտղբել ռուսական զորքին: Այդ ընդհանուր տրամադրութեան հետեւանքով սկսեցին բանակցութիւնները Վրացեանի եւ Լըգրանի միջեւ: Որոնց իբր արդիւնք Դեկտ. 2-ի երեկոյեան ժամը 4-ին Վրացեանի կառավարութիւնը հրաժարւում էր, տեղի տալով Դրոյնի ղեկավարութեանը, որը իր հերթին մի քանի օրից յետոյ իշխանութիւնը զիջում է Հայաստանի յեղափոխական Կոմիտէին:

Յեղափոխական Կոմիտէի անդամների մի մասը մտան Երեւան ամսի 4 ին: Միւս օրից ռեւոլյուցիոն սկսեց իր գործու-

նէութեան. պօրտֆէյները բաժնեցին հետեւեալ կերպով՝ Նախագահ և զեւղատնտ. Մինիստր՝ Կոսեան, Արտ. Գործ. Ալ. Բէգլարեան, Ներքին Գործ. Դովլաթեան, Խնամատարութեան՝ Հայկազ Կոստանեան, Հաղորդակցութեան Ոսկանեան: Զօրական, Աւետիս Նուրիջանեան: Սպասում էին Խաչակ Տէր-Գաբրիէլեան և Մուսեան: Ժամանակաւորապէս Ֆինանսների՝ Էրզնկի Էրզնկեան, Զօրքերի հրամանատար՝ Դրօ:

Կոսեանցը մեծամասնական հին գործիչ, ուսուցիչ և լրագրող է: Բէգլարեանը, նախկին ուսանող Մոսկուայի Պոլիտեխնիկում: Բաղդադեան, նախկին ուսանող Պետրոգրատի համալսարանի: Սահակ Դովլադեան, նախկին գործակաւատար Բագրի կօօպերատիւի խանութին: Կոստանեան, Ներսէսեան զարոյցի ընթացաւարտ վերջին տարիներին: Ոսկանեան, Սարիղամիշի տեղեկաբերը: Խաչակ Տէր-Գաբրիէլեան, գործակաւատար Կասպեան Ընկերութեան Բալուէեանի Մուսեան, Ս. Դեմօկրատ հին գործիչներից: Մինչեւ այժմ արեւել է մօտաւորապէս հետեւեալը՝ զօրացւում է կատարւած մինչեւ 25 տարեկան, 300 սպաներ ցուցակագրւած են ուղարկելու համար Ռուսաստան: Պէտք է ցրել բոլոր բանակը եւ կազմի խառն բանակ հայերից և օտարներից: Կարմիր բանակի կազմակերպութիւնը պիտի կատարուի ու պիտի անցնին Դիլիջանի շրջանում նոյնանման աշխատանք կատարելու այլ վայրերում: Ժողովուրդը զինաթափ է արւում և ուղարկւում են զենքերը դէպի Ազրբեյջանի և Ղազախի շրջանները: Ռուս մալականները ոչ միայն զինաթափ չեն արւում այլ և զինում են, համարելով այժմեան կառավարութեան յենարանը:

Բանտարկւած են նրանք, որոնք ուզում էին սահման անցնել. Համօ Օհանջանեան, Արտաշէս Զիլիկարեան, Վահան Նաւասարդեան, Գէորգ Վարշամեան, Վարոս Բաբայեան, Արշալոյս Աստուածատրեան, Ստեփան Խաչիկեան, Փշմանեան և ուրիշներ: Բացի այդ, Երեւանում բանտարկւած են, Համադասպ (հրամանատար) և ձախ. Դաշնակցականներից՝ Մելիք Եօջեան և Գերասիմ Մակարեան:

Բանտարկւած են Երեւան քաղաքից մօտ 200 մարդ իբրեւ սպեկուլանտներ: Դիլիջանում բանտարկւած են մօտ 20-25 զաշնակցականներ: Ռուսական զորք դանւում է Հայաստանում ոչ աւելի քան 1500-2000: Երկրի մէջ դեռ եւս չէ տարածուած խորհրդային իշխանութիւնը ամբողջապէս: Զանգեզուրը անորոշ է, Մշեցիները և Սասունցիները գտնւում են դեռ Արագածի ստորոտում: Այս է ահա մինչեւ ամսի 20-ը ստացւած վերջին տեղեկութիւնները Հայաստանից: Այնպէս բաժնեւոր և կտրւած է Վրաստանից Հայաստանը, որ մեզ յայտնի չէ թէ ինչ է կատարւում այնտեղ:

Հայաստանում թէև յայտարարւած է պետական լեզուն Հայերէն և Անկախ Հայաստան, բայց բոլոր հրահանգները գալիս են Մոսկուայից և պետական լեզուն աստիճանաբար դառնում է ռուսերէն:

Հայաստանում աշխատում է 11-րդ. ռուսական բանակի արտակարգ կօմիտան, որը անկախ է իւր գործողութիւնների մէջ, կարող է բանտարկել և զնդակահարել բոլորին անխորհրդ և ոչ մէկը իրաւունք չունի նրանից հաշիւ պահանջել: